

Իր մեծութեամբն է որ անշարժ կը կենայ և ուրիշ գնտերը կը շարժէ, և որովհետև զօրութիւնն ալ զանգուածոյն համեմատ տրուած է, անոր համար յանհամեմատութեամբն է քան զգիտաւոր աստղերը և հազար անգամ աւելի նիւթ կը բովանդակէ քան զամենամեծ մոլորակները . և գիտաւորք և մոլորակք ոչ կրնան զայն տեղէն իրախտել և ոչ ալ անոր կարողութենէն իրենք զիրենք ազատել, որ անհուն հեռաւորութեամբք ձգուելով՝ զանոնք ամէնն ալ կը բովանդակէ, և նորէն դէպ ՚ի արև կը բերէ ժամանակէ մը ետև զանոնք՝ որ աւելի հեռացեր էին . անոնցմէ ոմանք ալ իրենց վերադարձին այնչափ կը մտնան արևուն, որ յետ պաղերու դարերով՝ սարսափելի ջերմութիւն կը ստանան . ասոնք են թակայ են պլակերայ փոփոխութեանց այս ծայրագոյն ջերմութեամբ և ցրտութեամբ, ինչպէս նաև իրենց շարժման անհաւասարութեամբքը, որ երբեմն յանչափ երագ է, և երբեմն յանհուն զանգաղբոս իմիք ասոնք անկարգ աշխարհներ են մոլորակաց համեմատութեամբ, որոնց պարունակներն աւելի կանոնաւորեալ ըլլալով, շարժմունքնին աւելի հաւասար, և բարեխառնութիւննին ալ միշտ նոյն, հանգստեան վայրք կը կարծուին ըլլալ, ուր ամէն բան անփոփոխական ըլլալով՝ բնութիւնը կրնայ կարգ մը հաստատել, միակերպ ներգործելու յաջորդաբար զարգանալ իր ամէն ընդարձակութեամբք : Եւ մոլորակն աստեղաց մէջ ընտրեալ գնտերէն մեր բնակածը կարծես թէ աւելի առանձնաշնորհութիւններ ալ ունի, և արևէն նուազ հեռու, և նուազ ցուրտ է քան զՊոսիդոն, քան զՍերմոս, քան զՍիբիւս, քան զՍաթուրն, և քան զՍերմոս, և նուազ արևակէզ քան զՍերմոս և քան զՍաթուրն, որ շատ աւելի մտն են լուսոյ աղբեր :

Կը շարունակուի :

Աղգայիկ պատմութեան մասին պարագայք :

Երբեք չափազանց, որ Վաղղիոյ Սուրբ Աղղոյիկոս թագաւորին հետ 1248 թուականին իրաչափութեան գրեւոր Սուրբ Աղղիկոս, անոր վարուց մէջ հետևեալ պարագայները կը պատմէ : Բնագիրը նորօրինակ և բնական գրութիւն է, լեզուն՝ հին և դժուարիմաց :

« Եւ միջոցին որ մենք Վիպրոս էինք, Անեայի սուլդանն հեթանոս թագաւորաց մէջ հարստագոյնն էր : Եւ զարմանալի բան մը ըրեր էր . իր խեցիէ առնութիւնը խորտակել տուեր էր և անոնց տեղը ոսկիէ թափեր էր . և այս ոսկոյ զանգուածները իր մէկ զղեկին մէջ բաց տեղ մնացեր էին, անանկ որ դղեակ մտնողը կրնար անոնց դաշիլ ու տեսնալ . և վեց եօթը հատ մը կային : Իր մեծ հարստութիւնն երեցաւ ան վրանին վրայ, զոր հայաստանի թագաւորը Վաղղիոյ թագաւորին զրկեց, և որ հինգ հարիւր լիրա կ'արժէր . հայաստանի թագաւորին ալ Անեայի սուլդանին մէկ Քեռաշ տուեր էր : Քեռաշ անիկայ է որ սուլդանին վրանները կը հոգայ և տուներուն մաքրութեանը կը նայի :

« Հայաստանի թագաւորը՝ Անեայի սուլդանին ծառայութեանն ազատելու համար, Սաթարաց թագաւորին գնաց, և անոնց ծառայութեանը մտաւ՝ օգնականութիւն ձեռք ձգելու համար . և այնչափ առատ զինուոր բերաւ, որ կրցաւ Անեայի սուլդանին հետ պատերազմիլ . երկար տեւեց պատերազմը, և Սաթարք այնչափ մարդ սպաննեցին սուլդանին զօրքէն, որ ալ անկէ ետքը իրեն վրայ լուր մը չառնուեցաւ : Ըլլալիք պատերազմին համբաւը մեծ ըլլալով Վիպրոսի մէջ, մեր յիսնակետներէն ոմանք հայաստան գացին :

1. Հեզնակը Ermenie կամ Hyermenie կը կոչէ հայաստան :
2. Հեթում Ա թագաւորը :

բան վաստրկելու և պատերազմին մէջ մտնալու համար. բայց ոչ ոք անոնցմէ ետ դարձաւ .»¹

«Վշխանին¹ հետ եկան չորս գուսանք 'ի Ս'եծ Հայոց, որք եղբարք էին. ասոնք Արուսաղէմ ուխտի կ'երթային, և երեք փող ունէին, որոց ձայնը երեսնին կը զարնէր: Այլք կը սկսէին փողերն հնչեցընել, կարծես թէ լճակէն եկող կարապներու ձայն էր, և անանկ քաղցր ու շնորհալիներդաշնակութիւններ կը հանէին, որ լսողը կը հիանար: Իրեք զարմանալի պար կը բռնէին. ոտքերնուն տակ տախտակ մը կը դրուէր և իրենք ոտքի վրայ կեցած՝ կըր կը դառնային, անանկ որ ոտքերնին միշտ տախտակին վրայ կու գար նորէն. երկուքը գլուխնին դէպ 'ի կռնակնին ծռած կը դառնային, նոյնպէս անդրանիկն ալ. և երբոր գլուխը դէպ 'ի առջև դարձընել կու տային անոր, կը խաչակնքէր երեսը. որովհետև կը վախէր որ չըլլայ թէ դառնալու միջոցը վիզը խորտակի .»²

«Հոն² եկան ինծի շատ մը ժողովուրդ Ս'եծ Հայոցմէ, որոնք Արուսաղէմ ուխտի կ'երթային, մեծ հարկ վճարելով Սարակինոսաց որ իրենց կ'առաջնորդէին, հետերնին թարգման մը առած՝ որ իրենց և մեր լեզուն զիտէր: Ինոր ձեռքով աղաչեցին ինծի որ ցուցնեմ իրենց՝ սորբ Խափափորը: Այս ալ գացի Թագաւորին, որ վրանի մը մէջ նստեր էր, վրանին ցցին կութընած, և աւազին վրայ առանց գորգի և առանց ուրիշ բանի մը նստած: Բոի իրեն. «Տէր արքայ, դուրսը շատ ժողովուրդ կայ Ս'եծ Հայոցմէ որ Արուսաղէմ կ'երթան, և կ'աղաչեն ինծի, տէր արքայ, որ Սորբ Խափափորը ցուցնեմ իրենց. բայց ես դեռ քու նշխարքդ պագնելու չեմ ցանկար .» (Թագաւորն ախորժով ինտաց, և ըսաւ ինծի որ երթամ բերեմ զանոնք. և ես կատարե-

1. Անտիոքայ իշխանն՝ Բեհմնտ Զ' գնաց 'ի Ես. ֆա առ Սուրբն Լուգովիկոս արքայ Գաղղիոյ:
2. Ա. յսինքն Ա. քեհա:

ցի: Այլ երբոր տեսան Թագաւորը, Աստուծոյ յանձնեցին զինքը, ինքն ալ զանոնք .»¹

Նոր-Բրիտանիոյ մեծ արշիպեղաւ գուր:

Այս երկիրս Բաբուայի արևելեան կողմը կ'իյնայ, որմէն անձուկ նեղուցով մը կը բաժնուի. Տամբիէն անուամբ նաւորդը գտաւ 1700^ն, և իրեն ա. նուամբը կոչուեցաւ նաև նեղուցն ալ:

Վշխաւոր կղզիներն են՝ Նոր-Նորի. տանիա, և Նոր-Նուրնտա, որոնք իրար մէջ Ս. Վեորգայ ջրանցքովը կը բաժնուին: Արկիրը բարձրաբերձ լեռնե. րով լեցուն է, որոնց շրջակայ բլուրնե. րը և կղզւոյն արևանց վրայի ժայռերը մանաւանդ Նոր-Նուրնտիոյ, ածխային և կրային են՝ հին արևանց վրայ նոր շինուած որմերու նման: Արկիրը հրաբխային է, անտառուտ, և ջրարբի բուսաբերութիւնը շատ բեղնաւոր:

Այս կղզեաց բնակիչքը Բաբուացւոց ցեղէն կ'իջնան, բայց ասոնց հասա կը աւելի բարձր է և դէմքերնին աւելի վայելուչ. իրենց տաճարներուն մէջ հաւասարապէս կը պաշտեն մարդաձև չաստուածներ և կենդանիներ: Այս պատմեն որ մարդագոհ ալ կ'ընեն. բայց 1825^ն նոյն կողմերը քաղող ճանա պարհորդ մը անստոյգ կը հանէ այ կարծիքս, և ընդ հակառակն կը հաստատէ թէ շատ ազնուաբարոյ են մարդասէր և հիւրընկալ: Այս կղզիներէս ոմանք դեռ ևս լաւ ծանուցուալ են: Նոր-Նորիտանիան արշիպեղաւգոսին մէջ ամենէն մեծ կղզին է. մէջ բնակիչքը շատ ճարտար են մասնաւոր նաւակներ շինելու, որոնք տասնէ մինչ տասնեօթը մէզը երկայնութիւն կ'ուսնենան:

Նոսիպիւի կղզի: ՏՄՆդրըբասոզդ որ 1792^ն այս կողմերս մեծաւ մասաւ պտըտեցաւ, այս կղզւոյս բնակչաւ